ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱԻ

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Թուխ Մանուկ սրբավայրերը[1] բավականին հայտնի են Հայաստանի Հանրապետությունում, ժամանակին տարածված են եղել նաեւ Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում: Կան բնակատեղիներ, որտեղ առկա են երկու եւ ավելի Թուխ Մանուկներ, որոնք իրարից շատ տարբեր են՝ որպես կառույցներ եւ պաշտամունքի միավորներ:

Պաշտամունքն ինքնին ենթադրում է որոշակի արարողությունների համալիր (ծես)՝ միտված կոնկրետ նպատակներին: Հաճախ ծեսերն ունենում են առասպելական հիմք: Սակայն հազվադեպ չեն առասպելական պատումները, որոնք չունեն ծիսական արտահայտություններ[2]: Թուխ Մանուկների պաշտամունքում գերակայում է հենց այս տիպը. ծիսական արարողություններն այստեղ հիմնականում դուրս են մնում պատումային դաշտից, այսինքն՝ ամրապնդված չեն առասպելներով ու զրույցներով:

Սույն հոդվածում կներկայացվի Թուխ Մանուկ սրբավայրերին առնչվող բանահյուսությունը, որի մի մասը քաղված է հրատարակված աղբյուրներից[3], մյուս մասը՝ մեր դաշտային հետազոտություններից[4]: Բանահյուսական նյութը ստորաբաժանել ենք հետեւյալ սկզբունքով. ավանդություններ, երգեր, բանահյուսական մանր ժանրեր՝ աղոթք, երդում եւ այլն: Հոդվածն ամենեւին մտադրություն չունի լիովին սպառված համարել Թուխ Մանուկներին վերաբերող բանահյուսական նյութի քննարկումը, քանի որ նրանում ընդգրկված չեն բոլոր Թուխ Մանուկ-

[1] Թուխ Մանուկների վերաբերյալ առկա են ընդամենը մի քանի հոդվածներ, որոնք հիմնականում ամփոփված են Թուխ Մանուկ (սատաշրջանի նյութեր), Երեւան, 2001, ժողովածուում:

[2] **В. Тэрнер**, Символ и ритуал, Москва, 1983, с. 42.

[3] Համապատասխան աղբյուրներից քաղված նյութը բերվում է առանց փոփոխության:

[4] Ներկայացվում են ՀՀ ուխտավայրերը եւ ուխտագնացությունները, դրանց հետ կապված բանահյուսությունը ուսումնասիրող աշխատանքային խմբի հետազոտության արդյունքները 2011-2015 թթ. ընթացքում:

ները. դաշտային հետազոտությունները դեռ շարունակվում են: Առայժմ դուրս են մնում Շիրակի եւ Վայոց Ձորի մարզերը:

Ավանդություններ

Թեեւ Թուխ Մանուկ սրբավայրերը սփռված էին Հայոց լեռնաշխարհի բազմաթիվ շրջաններում, այնուամենայնիվ, դրանց վերաբերյալ ավանդազրույցներն այնքան էլ շատ չեն եւ հիմնականում վերաբերում են Թուխ Մանուկ սրբավայրերի ծագմանն ու Թուխ Մանուկի կերպարին:

Ավանդությունների առաջին խմբի պատումները պատմում են Թուխ Մանուկների ինքնության մասին: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի՝ ա. Թուխ Մանուկ՝ օտարազգի երեխա, բ. Թուխ Մանուկ՝ Քրիստոս, գ. Թուխ Մանուկ՝ հերոս-նահատակ, դ. Թուխ Մանուկ՝ զորատու:

Բուլանրիս գավառի Համզա-Շեյխ գյուղի Թուխ Մանուկ. «Թուխ Մանուկը Համզայ անուն շէյխի որդին կը լինի. 5-6 տարեկան եղած ժամանակ, Հայոց տղաքներու նման ականջները գինդ անցկացնելով կերթար քահանաներու մօտ եւ կը կարդար Հայոց լեզուով: Շէյխ Համզան իմանալով, մանուկ որդին գիւղից դուրս տանելով սրախողխող կանէ, եւ անհաւատներու հետ նստելու կանգնելու համար կը կանչէ Հայերը եւ որդու պիղծ մարմինը կը յանձնէ սոցա: Փոքրիկ նահատակի վրայ աշկարայ լոյս իջնելով, հայերը մատուռ կը կանգնեցնեն վրան եւ կանուանեն Թուխ Մանուկ: Ոմանք կստուգաբանեն իբր Թուխ-լամուկ, այսինքն՝ սեւ լամուկ, որ կը նշանակէ՝ թուխ-որդի (քրդ.), որովհետեւ լամուկ բառը քրդերէնի լաւ կամ լաւէ բառերու փոփոխած ձեւն է»[5]:

Աշտարակի Թուխ Մանուկ. «Մի արեւկող այգու անկյունում այսօր էլ դեռ կանգնած է Հնձանաբաղը: Այդ մի ավերակ է, որի գազաչափ երկարությամբ քառանկյունի կոփածո քարերի երեսները ժամանակին մաշող զորությունից տեղ-տեղ խորդուբորդվել են: Ամենաքիչը 700-800 տարի հնության են: Հնձանաբաղը դարերով ոչ միայն ադամորդու ոտք չի մտել, արեւն ու անձրեւն էլ դժվար են թափանցել: Հինավուրց հաստաբուն թեղի ծառի խիտ եւ անխնամ ոստերն են հովանավորել ամբողջ ավերակի վրա, ծառը ճյուղերը վրանանման կռացրել է ավերակի վրա եւ փռել մինչեւ գետին: Թեղուն դիպչելը մեղք էր, թեղին Թուխ-մանուկի տնկածն էր. գյուղի երեխեն էլ գիտեր, որ թեղու ոչ մի ճեղքին դանակ, էտոց, կա-

[5] **Բենսէ,** Բուլանրիս կամ Հարք գաւառ, Հավատք, ԱՀ, հ. Զ., Թիֆլիս, 1900, էջ 25-26:

ցին չպետք է դիպչեր, ապա թե ոչ արյուն դուրս կգար: Թեղին հենց ինքը Թուխ-մանուկն է, բարակ ոստերը Թուխ-մանուկի երակներն են, իսկ տերեւները նորա գզգզված մազերն են: Թուխ-մանուկը մերձակա պարսկական գյուղի մոլլի որդին էր. նա քրիստոնյա էր դառել, նրա մոլեռանդ հայրը կամեցել է որդուն սպանել, հալածելով հասցրել է մինչեւ այս գյուղի Հնձանաբաղը: Մանուկը տեսնում է, որ հայրը հասվեհաս է, խնդրել է Աստծուն, որ իրան ծառ չինի, հոր ձեռքից ազատի: Խնդիրքը կատարվել է. մանուկի գզգզված մազերը ճղքներ են դարձել եւ մոլլի մտնելուն արգելք եղել: Կատաղած մոլլեն թրով տվել է ծառի մի ճյուղքը քերծել: Այսօր էլ կտեսնես քերծված տեղում չորացած ու սեւացած արյունը»[6]*:*

Այս ավանդությունը բառացի մեջբերում է Ե. Շահազիզը, միայն պարսիկի փոխարեն հերոսը թուրք երեխա է[7]*: Շահազիզի ժամանակներում, այսինքն՝ Ի. դ. առաջին տասնամյակներում, Աշտարակում գտնվող այս Թուխ Մանուկն այլեւս գոյություն չուներ*[8]*:*

Գեղհովիտի Թուխ Մանուկ. «Թուխ Մանուկ է կոչվում սեւ մաշկով մանուկի համար, որը հայ չի եղել»[9]*:*

Որոշ դեպքերում անմիջականորեն հայտնում են, որ Թուխ Մանուկը հենց Հիսուս Քրիստոս է: Հիմնականում դա պարզապես հավատք է[10]*, բայց երբեմն այն հանդես է գալիս նաեւ ավանդության տեսքով:*

Ալափարսի Թուխ Մանուկ. «Թուխ Մանուկը շատ մեծ պաշտպան է: Ինքը Հիսուս Քրիստոս է: Նա թուխ է եղել, երկրով շրջելիս բոլոր վայրերում, ուր գիշերել, պաշտպանություն է գտել, հանգստացել է, այդ տեղերն իր անունով կոչվել են Թուխ Մանուկ: Երբ հոգեպես կամ մարմնապես նեղվում ես, կարող ես գալ աղոթելու՝ դա է փրկության ճանա-

---

[6] **Պ. Պոռշյան**, Ցեցեր, Երկերի ժողովածու յոթ հատորով, հ. 3, Երեւան, 1963, էջ 403-404: Այս Թուխ Մանուկը նաեւ օձերի թագավորի պալատն է, այս ավանդությունը տես վեպի շարունակությունում, էջ 404-405: «Հնձանաբաղ-Արարատյան աշխարհի այգեշատ գյուղերի այգիների մեջ տեղ-տեղ մնացած հին հնձանների ավերակներ են, հնձանատեղիներ: Հնձանաբաղը դրսից ոչինչ չի ներկայացնում. այգետերերը թափված քարերը ժողովել են ու թափել ներսը, գավթի մեջ» (բացատրությունը՝ Պ. Պոռշյանի):

[7] **Ե. Շահազիզ**, Աշտարակի պատմությունը, Երեւան, 1987, էջ 218-219:

[8] Նույն տեղում, էջ 223:

[9] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան,** Դաշտային ազգագրական նյութ (այսուհետ՝ ԴԱՆ), Գեղարքունիք, Գեղհովիտ, 2013, ասացող՝ Կիրով Մովսիսյան, 1939 թ. ծնվ.: Հնարավոր է, որ Գեղհովիտում էլ է եղել ավանդություն, ըստ որի՝ Թուխ Մանուկը օտարազգի երեխա է եղել, ով ընդունել է քրիստոնեությունը եւ դրա համար սպանվել:

[10] Դաշտային հետազոտության ընթացքում այն հարցին, թե ով է Թուխ Մանուկը, հաճախ ուղղակի պատասխանում են տրված հարցին, երբեմն՝ պատմում ավանդազրույցը, ինչպես Քուչակի Թուխ Մանուկի դեպքում Բուրիկ մայրիկն ուղղակի պատասխանում է. «Սուրբ Կարապետն ի, Հիսուսի քավորն ի»:

պարհը: Քանի որ Հիսուս մահացել է 33 տարեկան ու չամուսնացած, դրա համար Մանուկ է»[11]*:*

Արեւշատի Եղիշի տան Թուխ Մանուկ. «Փոքր, մանուկ Քրիստոս է, ով ամպի վրա նստած՝ երբեմն իջնում է մատուռի վրա»[12]*:*

Մասիսի Թուխ Մանուկ. «Թուխ Մանուկը Քրիստոս է, երբ ծնվում է, ասում են՝ ծնվավ Թուխ Մանուկը»[13]*:*

Հացաշենի Թուխ Մանուկ. «Թուխ Մանուկն ինքն՝ Աստված է: Նա գաղտնի է եկել, որպես մանուկ, ծնվել է կնոջից: Ծնվելու ժամանակ, երբ մարդիկ եկել են այցի, տեսել են, որ թուխ երեխա է: Դրա համար Թուխ Մանուկի ուխտը իր ծննդյան օրն է՝ սեպտեմբերի առաջին շաբաթը»[14]*:*

Թուխ Մանուկների մասին ավանդությունների մյուս խումբն են կազմում այդ սրբավայրերի ծագման մասին պատումները:

Կապուտանի Թուխ Մանուկ. «Մի ժամանակ լուր է տարածվում, որ Կապուտանում մի բլրի վրա սուրբ կա, որ տղա երեխաներ է տալիս, երբ մատաղ ես անում: Մի մարդ, աղջիկ երեխաներ ուներ, բայց տղա էր ուզում, մատաղ է վերցնում ու գալիս է Կապուտան, սրբի մոտ: Մառախուղ է լինում, մոտակա ժայռի վրա ժամի նման[15] *մի բան է նկատում (այժմյան Թուխ Մանուկը), մտածում է, որ վերջապես գտավ սրբին: Իրականում նրանք փնտրում էին Կապուտանի Ս. Մինաս վանքը, որ գտնվում է Թուխ Մանուկ ժայռի դիմացի բլրին: Մառախուղի պատճառով նրանք բլուրը չփոթում են ժայռի հետ: Բարձրանում են ժայռը, մատաղ են անում, ուտում-խմում, հեռանում են: Ինը ամիս հետո մի տղա՝ թուխ մանուկ, սեւուկ երեխա են ունենում, անունն էլ դնում են հենց Թուխ Մանուկ:*

---

[11] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան**, ԴԱՆ, Կոտայք, Ալափարս, 2014, ասացող՝ Լաուրա Կարապետյան, 1948 թ. ծնվ.:

[12] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արարատ, Արեւշատ, 2011, ասացող՝ Ռեբեկա Դիլբոյան, 1967 թ. ծնվ.:

[13] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան**, ԴԱՆ, Արագածոտն, Թալին-Մաստարա, 2015, ասացող՝ Հրանուշ Թադեւոսյան, 1930 թ. ծնվ.:

[14] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արագածոտն, Թալին-Հացաշեն, 2015, ասացող՝ Տարոն Մարտիրոսյան, 1964 թ. ծնվ.: Այս ավանդությունը շատ յուրահատուկ է: Թվում է, թե խոսքը Քրիստոսի մասին է, սակայն բանասացը Նրա անունը չի տալիս, մյուս կողմից Քրիստոսի ծնունդը հունվարին է, ոչ թե սեպտեմբերին: Հացաշեն գյուղում Թուխ Մանուկի տոնն ունի յոթ օրվա շարժականություն: Ճիշտը սա է համարվում, թեեւ Հացաշենում Թուխ Մանուկի մասին երկու ավանդություն էլ կա՝ ըստ հոգեւորականի՝ Թուխ Մանուկը քրիստոնյա երեխա է եղել, ում տանջամահ են արել մահմեդականները, եւ հրեա մանուկ է եղել, ում առեւանգել են մահմեդականները:

[15] Կապուտանի Թուխ Մանուկը ժայռ է, որի վրա մենհիր է կանգնած:

Ամեն տարի այդ օրը գալիս են եւ տոնում են երեխայի ծննդյան օրը, եւ այդ օրվանից այս սրբավայրը կոչվում է Թուխ Մանուկ»[16]*:*

Պտղնիի Թուխ Մանուկ. «Ասում են. եղել են որբ երեխաներ՝ քույր ու եղբայր, որոնց սպանել են այդտեղ: Անմեղ երեխաների վրա երկնքից լույս է իջել եւ այդ վայրում եկեղեցի են կառուցել»[17]*:*

Արեւշատի Թուխ Մանուկ-Կուս Վառվառ. Սրբավայրը ժամանակին հին շենքի միջանցքում է եղել[18]*, շենքը քանդելիս դրան ձեռք չեն տվել: Համարվում է, որ այն կառուցել է Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը*[19]*: «Իրենք երեք քույրեր են, մեկը սա՝ Կուս Վառվառ, մյուս երկուսը՝ Հռիփսիմեի եւ Գայանեի սրբավայրերը, հեռու են գտնվում՝ գյուղի դաշտերում: Սովետի ժամանակ հրաման է եղել մաքրել տրակտորով, բայց երբ տրակտորը մոտեցել է, մի ահագին օձ է դուրս եկել, եւ տրակտորիստը հրաժարվել է քանդել սրբավայրը»*[20]*:*

Վարդենիկի Թուխ Մանուկ. «Մի ժամանակ գյուղում օտարական սեւուկ, թուխ տղա է եղել, ով շատ է աղոթել, ամբողջ օրը մատուռից դուրս չի եկել, հետեւել է մաքրությանը: Երբ նա մահացել է, իր թխության պատճառով սրբավայրն անվանել են Թուխ Մանուկ: Մեջի տապանաքարը իր գերեզմանն է»[21]*:*

Որոշ Թուխ Մանուկներ կապված են ազգային հերոսների հետ[22]*:*

Լիճքի Հոխիկյանների Թուխ Մանուկ. «Երբ թուրքերը հարձակվում են ու ներխուժում գյուղ, մի տղա երեխա, որ ձեռքին խաչանշան ուներ, թաքնվում է մատուռի ետեւում: Թուրքերը գտնում են նրան, սուրը քաշում են, որ սպանեն, վրա է հասնում Զորավար Անդրանիկը, կոտորում է թուրքերին, տղային նստեցնում է իր ձիուն եւ տալիս է նրան երեք բանալի»[23]*:*

---

[16] Ռեժիսոր Խանե Պողոսյանի ձայնագրություններից, Կոտայք, Կապուտան, 2015:

[17] Պտղնիի Թուխ Մանուկը գտնվում է մեծ եկեղեցու տարածքում, որից միայն հիմքն է մնացել: **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Կոտայք, Պտղնի, 2013, ասացող՝ Այվարդ Ղարյան, 1945 թ. ծնվ.:

[18] Հիմա սրբավայրը գտնվում է գյուղի փողոցներից մեկում, իսկ տունն ավելի խորքն է ընկած:

[19] Իրականում այս Թուխ Մանուկը գետաքարերից բաղկացած աշտարակաձեւ մի քարակույտ է:

[20] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արեւշատ, ասացող՝ Պարգեւ Գրիգորյան, 1931 թ. ծնվ.:

[21] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիկ, 2013, ասացող՝ Հասմիկ Սահակյան, 1994 թ. ծնվ.:

[22] Գելիեգուզանի Թուխ Մանուկը կամարակապ եկեղեցի էր, որին կից հերոսների պանթեոն էր, ուր թաղված էին որոշ հայդուկապետներ՝ Աղբյուր Սերոբ, Հրայր Դժոխք, Իշխան Պետո եւ այլք: Տես. **Վ. Պետոյան**, Սասունի ազգագրությունը, Երեւան, 2014, էջ 11:

[23] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Լիճք, 2013:

Գեղհովիտի Թուխ Մանուկ. «Գարեգին Նժդեհի զինվորներից մեկը անցել է այստեղով դեպի Զանգեզուր՝ պատերազմելու թուրքերի դեմ, աղոթք է արել Թուխ Մանուկին, եւ 300 հայ զինվորներով հաղթել են 700 թուրք զինվորներին: Դեպքից հետո երեխա է ծնվել, եւ ի պատիվ հաղթանակի՝ անունը դրել են Մանուկ»[24]*:*

Մի քանի Թուխ Մանուկների դեպքում ավանդությունը պատմում է, թե ով է եղել Թուխ Մանուկը, եւ ինչպես է առաջացել սրբավայրը:

Գավառի Կարմիրգյուղի Թուխ Մանուկ. «Ափեր Սմբոն բացատրում է, որ Միչինքը[25] *հնարել են 40 մանուկները, որոնք ընկերներ էին: Նրանց մեջ հարց է ծագել, արդյոք ո՞վ պետք է ղեկավարի խումբը: Տեսել են, որ համաձայնություն չեն գալիս, մեծ հաց են թխել, մեջը դրամ են դրել: Բաժանելուց հետո ում ընկել է դրամը, նա էլ դարձել է խմբի ղեկավարը: Այդ մանուկներից ամենախելոքը եղել է թխադեմ մի մանուկ: Նախանձոտ հոգեւորականները մանուկին սպանել են: Հետագայում, ի պատիվ այդ մանուկների, կառուցել են «Թուխ Մանուկ» անունով շատ մատուռներ: Նզո՛վք այդ նախանձոտ մանկասպաններին: Հետո Ափեր Սմբոն բացատրում է, որ քառասունքը Քրիստոսի ո՛չ մահվան, ո՛չ էլ ծննդյան քառասուն օրերն են, այլ այն ժողովուրդն ընդունել է ի պատիվ քառասուն մանուկների, որոնք պայքարել են հոգեւորականների չնության եւ կեղծիքների դեմ: Այդ պատճառով էլ հենց նրանցից ամենաաչքի ընկնողին սպանել են, բայց ժողովուրդը նրանց հիշատակը չի մոռացել: Դարեր են անցել եւ մանուկները մոռացության են տրվել: Այդ տոնը կոչվում է նաեւ «Լիճք»*[26]*. լճացել է մանուկների արյունը, բողոքել, բայց, միեւնույն է, մոռացվել է»*[27]*:*

Այս ավանդության երկրորդ տարբերակը՝ քիչ այլ մանրամասներով.

---

[24] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Գեղհովիտ, 2013, ասացող՝ Կիրով Մովսիսյան, 1939 թ. ծնվ.: Այս Թուխ Մանուկն այժմ եկեղեցի է, խորանում մեծ խաչքար է կանգնած, որը ջարդված է եղել մեջտեղից, հետո շաղախով միացվել, այն կոչվում է Սպայի Խաչքար՝ Գարեգին Նժդեհի պատվին, տես. **Կ. Հովհաննիսյան**, Գեղարքունիք. մի քանի Թուխ Մանուկ սրբավայրերի մասին, ԱՖՏ, Թ., Երեւան, 2014, էջ 211:

[25] Միչինքը խորհրդանշում էր Մեծ պասի կիսվելու՝ 24-րդ օրը: Միչինք կամ միջնակլոճ է անվանվում նաեւ ծիսական բաղարջը, որ կիսում են այդ օրը երեկոյան: Տես **Ս. Մկրտչյան**, Տոներ, Երեւան, 2010, էջ 62:

[26] Ակնհայտ է, որ այստեղ խոսքը Սեբաստիայի Քառասուն Մանկուքի մասին չէ, սակայն որոշակի շփոթ կա. «Լիճք» ծեսը կապված է Սեբաստիայի մանուկ-նահատակների հետ: Լիճքի տոնը ընկնում էր Միչինքի շաբաթի չորեքշաբթի օրը: Տես. **Ս. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 63:

[27] **Գ. Ստեփանյան,** Սեւան-Գեղարքունիք, ՀԱԻ արխիվ, ֆոնդ 125, թղթ. 257, թ. 36-37, բանասաց՝ Սմբատ Ասատրյան, 1886 թ. ծնվ.:

«Մի վանքին կից կար դպրոց, ուր պատանիներ էին սովորում, թվով 40 հոգի: Մի օր պատանիները տեսնում են, որ մի քանի վարդապետ ու քահանա կույսերի հետ շնություն են անում: Կույսերն ու վարդապետները որոշում են քնած ժամանակ բոլոր պատանիներին սպանեն, որպեսզի շնության լուրը չտարածվի: Այդպես էլ անում են: Սկսվում է կոտորածը, բայց այդ ժամանակ մի թխադեմ մանուկի հաջողվում է փախչել եւ թաքնվել: Ազատվելով, նա այդ մասին չի պատմում, քանի որ իրեն էլ մահապատժի կենթարկեն՝ որպես զրպարտողի: Այս մանուկը, հեռանալով այլ վայրեր, պատմում է եղելությունը: Ի հիշատակ մանուկների այդ կոտորածի՝ մատուռներ են կառուցում ու անվանում Թուխ Մանուկ: Շատ տարիներ հետո բոլոր թուխ մանուկները դասվում են սրբերի շարքը[28] եւ պաշտվում ժողովրդի կողմից»[29]:

Մեղրաձորի Թուխ Մանուկ (Թեժառույք). Կա երկու ավանդազրույց: Առաջինն այս է.

«Թուխ Մանուկ Վանկի անունն է, հույն ժողովուռտ է սարկողն էլէ[30]: Իրանծ ադատի կայդի[31] անուն են դըրաճ: Ըդոնկ քուր ու ախպեր են, քըվօր անունը Թուխիդ, ախպոր անունը՝ Մանուգ, ըդոնկ էլ շադ բարի, սըռպատան[32] մարտ: Ըդու հըմար էլ, վանկի անունը դըրաճ Թուխ Մանուգ»[33]:

Ահա երկրորդ ավանդազրույցը.

«Մեր վանկի անունը, ախպոր անունը Մանուգ է, քըվօր անունը մըդես գածեր է: Քուր ու ախպեր ջհուդի էրեխեկ են ըդոնկ: Գիդես ինճի՞ հըմար է էդ անունը: Էրգու քուր են էլաճ, մէ ախպեր: Գնածաճ են առդերը պայելու հին ժամանագ: Հերն ասէ, ջըհուդը, ասէ գածեկ, վօր կըշերը չուդեն, սաղ ցորըններն ուդըմ են, մընըմ միննագ քոկերը: Դէ, անհավադ ժողովուռտ են: Էդ իրեկով նըստըմ են, էն քուրն ասըմ է ախպորը. «Ախպե՛ր, արէ տանկ էս Դիվերի Կաբրդինը[34] պայ, էտանկ, թո ծըդերը էտան

[28] Իրականում քրիստոնեական սրբերի շարքում Թուխ Մանուկ չկա, այստեղ էլ շեշտվում է ժողովրդի կողմից պաշտվելու հանգամանքը:

[29] **Գ. Ստեփանյան**, նշվ. աշխ., թղթ. 126, թ. 25-26, Կարմիր գյուղ, բանասաց՝ Սմբատ Ասատրյան:

[30] Մեղրաձորում Թուխ Մանուկ են անվանում հայտնի Թեժառույք վանքը, որ կառուցել է Իվանե Երկայնաբազուկը 1196-1199 թթ.: Այն քաղկեդոնիկ եկեղեցի է, դրա համար էլ ավանդազրույցում ասվում է, որ այն կառուցել են հույները:

[31] Իմա՛ սովորության համաձայն:

[32] Իմա՛ սրբազան, սուրբ:

[33] **Գ. Հակոբյան** ԴԱՆ, Կոտայք, Մեղրաձոր, 2011, ասացող՝ Արաքսի Եփրեմյան, 1929 թ. ծնվ.: Բարբառային բառերի թարգմանությունն՝ ըստ բանահավաքի:

[34] Իմա՛ Աստծո տուն:

յան»: Ասըմ է, էդ դըռբին վոր ասեր է, ինճ որ կառդա[35], կեչխագ[36] բան կար, էդ առդի մըճիծ ըմմեն քաշվաճ են, էլ մէ հադ չէ մընածէ: Հա նըստաճ, նըստաճ, տեյաճ դածեր են, ասած են. «Տես, Կաբուդը[37] հեռածըրեծ»: Էտըմ են տունը, հերն ասըմ. «Հըմի առդը կերան»: Ախճիգը վեռծընըմ ասըմ է. «Հե՛ր, տվեր ենկ էս Դիվերի Կաբըդին պայ, առդի վըրնիծ կըշերն ըմմեն փախան, մեր առդին էլ չըկան»: Հերն առնըմ հոշարին[38], ընգընըմ ճըժերու էդեվը[39]: Ախճըգներիծ մեգը էտըմ, Ծաղգավանկ են ասըմ, մեգին ընդե է բըռտըմ, մեգին էլ վանկի ծառի տըգին տըղին է մոռտըմ, վանկի մըճին էլ ախճըգանն է մոռտըմ: Գիշերը Ասծու հըրամանկով բոծը էրգինկ է ըլնըմ: Ընդե վանկ չէ ըլնըմ, էդ բոծը ըլնըմ երգինկն ու իճընըմ է, ընդե Ասսու հըրամանկով տեռդերները տեսնըմ են, ասըմ են. «Ժամին, էս սարին ճըկնավոր կա»: Առեճ էտըմ ին սարերին ճըկնըմ ին ջայելները, վոր ըլներին սուռպ: Ասեր են ընդէ ճըկնավոր կա: Գածաճ տեսաճ ի՞նճ ճըկնավոր, էրգու հադ բըռտուդ մառտ կա, մեգն ախճիգ, մեգը՝ տըղա: Ասըմ են տեռդերները. «Տեր, քեզի այան[40] է, ըսենծ բան է»: Մեգն էլ Ծաղգավանկ է ըլնըմ, հիմի էտըմ են ընդեղ, մեր վանկի քուրն է: Ընդե բերըմ են ալբալը[41] թապըմ են, վանկը կաբըմ են, ընդու վըրեն վանկ են սարկըմ, գերեզմանօծ են սարկըմ: Վանկի ծառըն էլ հիմի տանճի ծառն է, ընդու բոլորն էլ սարկած, հասարապադաճ, էդ էլ վանկի ախպերն է: Միչտ ինկըն էլ մուրազատուր վանկ է: Էդոնկ ջհուդի ախճիգ են, տղա - ախճիգ են: Ընդենծ

---

[35] Իմա՛ ագռավ:

[36] Իմա՛ կաչաղակ:

[37] Իմա՛ աստված:

[38] Իմա՛ թուր ու թվանք, սպառազեն, տվյալ դեպքում՝ սուր:

[39] Մինչ այս մասը՝ ավանդությունը գրեթե բառացիորեն կրկնում է «Սասնա Ծռեր» էպոսի տարբերակներից մեկի սկզբի հատվածը: Մի կռապաշտ թագավոր երկու որդի է ունենում՝ Սանասար եւ Ասլիմելիք: Դրանց արտերը թոչուններն ուտում էին, քանի որ կռապաշտ էին: Մի օր հայրը նրանց ուղարկեց՝ արտերը թոչուններից պահպանելու: Սանասար նայեց վերեւ ու ասաց. - Մեր հայրը կուռք է պաշտում, բա էս «վերի դեխինն» ինչ է: Կա չկա, սա Աստվածն է: Անպայման մենք պիտի հավատանք Աստծուն: Հենց հավատաց, թոչուններն այլեւս արտերը չվնասեցին: Նրանք տուն գնացին, երբ հայրն իմացավ, որ թոչուններն էլ արտերը չեն վնասում, հասկացավ, որ նրանք հավատացել են «վերին դեխի» Աստծուն ու այդ մեղքի համար պետք է կուռքին մատաղվեն: Մոր խորհրդով եղբայրները փախչում են տանից: Տես Սասնա Ծռեր, Երեւան, 1977, էջ 251-253, Ե. պատում, պատմող՝ մարտունեցի Հովհաննես Հակոբյան, գրառող՝ Ս. Հարությունյան:

[40] Իմա՛ քեզ հայտնի լինի:

[41] Իմա՛ իսկույն: Խոսքը շինանյութի մասին է:

Ասսուն դիմաճ, ասաճ, առտեն ըստոնկ դառծան հայ: Ըստոնկ կըրոնը փոխին, հավադաճին, կըրոնը փոխեճին, էլ չեն կառնա ըստոնճ վըրեն»[42]*:*

Որոշ Թուխ Մանուկների դեպքում ավանդության մեջ արտացոլվում է դրա պաշտպանական գործառույթը:

Վարդենիսի Թուխ Մանուկ. «Երբ թուրքերը արշավում են Հայաստան, Վարդենիսի հայերը փախուստի են դիմում. թուրքերը պաշարում են քաղաքը: Թուխ Մանուկը պատ է ստեղծում քաղաքի շուրջ, կասեցնում է թուրքերին, եւ հայերը փրկվում են: Այդ օրվանից դառնում է ուխտատեղի»[43]*:*

«1918 թ. ադրբեջանցիները հարձակվում են Վարդենիսի վրա, պաշարում քաղաքը: Թուխ Մանուկը բուք ու բորան է բարձրացնում եւ փրկում հայերին»[44]*:*

Որոշ ավանդություններում չեշտվում է Թուխ Մանուկի տված զորությունը:

Մասրարայի Թուխ Մանուկ. «Մի երկու հարյուր տարի առաջ գյուղում մի թամբալ տղա էր ապրում: Տանը ոչինչ չէր անում, հայրը զայրանալով վռնդում է նրան տանից: Տղան փախչում, գալիս է Թուխ Մանուկ, այնտեղ էլ քնում է գիշերը: Երազում ինչ-որ ուժեր նրան 7 փաթ շղթա են կապում, նա տրտնջում է, թե՝ «Շղթաները նեղում են»: Խղճում, թողնում են մեկ փաթը: Տղան լարում է ուժերը, ձիգ է տալիս՝ շղթան փրթում է: Առավոտյան արթնանում, գնում է գոմ, անասունի մոտ, ուզում է կովի տեղը փոխել, ձեռքը մխրճվում է կովի մարմնի մեջ. սուրբը հսկայական ուժ էր տվել տղային: Մի օր հզոր մի փահլեւան է գալիս գյուղ, որ մրցի նրա հետ, եւ հյուրընկալվում է նրա տանը: Գիշերն Ավոն զարթնում, բարձրացնում է տան քարե սյունը եւ փահլեւանի չարուխը դնում է սյան տակ: Փահլեւանը առավոտյան արթնանում է, փնտրելով չարուխը՝ չի գտնում: Նայում, տեսնում է սյան տակ է դրած, վախեցած գոռում է. «Էսիկ ծուռ է», ու փախչում, գնում է: Այդ օրվանից տղայի անունը մնում է Ծուռ Ավո: Իրենց տոհմը շարունակում է ապրել գյուղում, եւ էդ տոհմում դեռ կա Ծուռ Ավոյի ուժը»[45]*:*

---

[42] **Գ. Հակոբյան**, ԴԱՆ, Կոտայք, Մեղրաձոր, 2013, ասացող՝ Շուշան Վիրաբյան, 1928 թ. ծնվ.:

[43] **Ն. Շամամյան**, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիս, 2012, ասացող՝ Անահիտ Կարապետյան, 1955 թ. ծնվ.:

[44] Նույն տեղում, ասացող՝ Ասպրամ Շհոյան, 1970 թ. ծնվ.:

[45] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան**, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Թալին-Մաստարա, 2015, ասացող՝ Հրանուշ Թադեւոսյան, 1930 թ. ծնվ.: Այս ավանդությանը շատ նման է Ս. Հովհաննես Կարապետ վանքի եւ Մանուկ փահլեւանի մասին պատմվող

Երգեր

Թուխ Մանուկների մասին հյուսվում էին ժողովրդական եւ աշուղական երգեր, որոնք ծիսական, մի քանիսն էլ՝ սիրային բնույթի են: Ծիսական երգերը երգվում էին հենց Թուխ Մանուկ սրբավայրերում:

Պաշտամունքի եւ ուխտագնացությունների մասնակիցները հասարակության բոլոր շերտերն են՝ ամբողջ համայնքը: Շատ դեպքերում, հատկապես բազմամարդ ուխտագնացության ժամանակ, կազմակերպվում էին զանազան մրցություններ, երգ ու պար: Աշուղները, որոնք իրենց շնորհի համար պարտական են Մշո սուլթան Սուրբ Կարապետին, մտնելով ամեն քաղաք, գյուղ եւ բնակավայր՝ գովերգում են սրբին: Այդ երգերի մեջ երբեմն հիշատակվում է Թուխ Մանուկը, օրինակ.

Սուրբ Կարապետ բարձրը բոլոր
Քե ճամբըխներ օլոր մոլոր.
Շատ ուխտաւոր քե դուռ կիգայ,
Շատ ուխտաւոր՝ որ ոտաւոր,
Որ ձիաւոր, պոշ ձիաւոր:
Սուրբ Կարապետ եմ գնացեր,
Պառկուկ եմ, մէջն եմ քնացեր,
Սէրս եմ առեր, չեմ իմացեր,
Ումուտատուր սուրբ Կարապետ:
Ինն աչերու լուսաղբիւրներ
Կաթ կու կաթեն լոյս լոյս ջըրեր,
Ուռին բարտին շուք են եղեր,
Սիրականիս շնորհք են տըւեր:
Ի հոն դնեմ գլխիկս քարին,
Հոգիս ի տամ Թուխ մանուկին.
Ի հոն քնեմ սուրբ Կարապետ,
Ումուտատուր սուրբ Կարապետ[46]:

Հաջորդ երգը նույնպես ժողովրդական-աշուղական ստեղծագործություն է՝ նվիրված Ս. Կարապետ վանքին:

Սուրբ Կարապետ

Դու աղա ես, դու փաշա ես.
Էմեն սրբոց դու գլխաւոր ես,
Մաքուր քեաւոր սուրբ Կարապետ:

ավանդազրույցը: Խաս գյուղացի Մանուկը մեծ ուժ ուներ, ամեն Վարդավառին բազմության առաջ երկու-երեք ձիու նալ կամ սամախոռ էր կոտրում: Իր ստացած ուժի մասին պատմում էր. Վարդավառի ուխտի ժամանակ քնում է վանքում եւ երազում մի սեւյակ է տեսնում: Մի կողմում կժով արյուն, մյուս կողմում՝ թարախ, դրանց միջեւ մի մարդ: Սա վերցնում է զութանի շղթան եւ կապում Մանուկի ոտները, բոի մեջ էլ իրար խառնած մեկ բուռ ցորեն ու կորեկ է լցնում: Հրամայում է իրարից զատել ցորենն ու կորեկը, հետո շղթայում է նաեւ նրա ձեռքերն ու հրամայում. «Թոթվե՛»: Մանուկը կատարում է հրամանը, շղթան փշրում է, արթնանում է փշրվելու ձայնից եւ այդ օրվանից հզոր ուժի տեր է դառնում: Տես. **Կ. Մկրտչեան Մշեցի**, Տարօն, Արարատ, 1881, թ. 5, էջ 234:

[46] **Վ. Տէր-Մինասեան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հ. Բ., Կ. Պոլիս, 1904, էջ 39-40:

Քե շինած կամար-կամար.
Լուսն էր դադրած չուր ազմար՝
Քրիստոսի խաթրի խամար:
Քեռ լուսամուտ խրտ աւազան.
Ոսկի բուռ, ոսկի գաւազան.
Թուխ մանուկ[47] առջեւ զանազան:
Քե շինած է մէջ պրակին,
Քեռ տօնն է կանանչ կիրակին,
Դարտին դարման սուրբ Կարապետ:
Քեռ ճամբրխըներ օլոր-մոլոր,
Քեռ դուռ կիգէր շատ ըխտաւոր.
Ձիաւորին ոսկի խնձոր,
Պայաւորին մուրատատուր սուրբ Կարապետ:
Դեռ նստիմ քե գովամ,
Չարքեր բռնեց, մլեց զնտան.
Մէկ թօփալ կեօնդրիկ կէր.
Ասաց. - Քե կեղնիմ մուխրախան,
Տանեմ թափեմ Փըռ Պաթման,
Չուր Քրիստոս գայ դատաստան[48]:

Մեկ այլ երգի հեղինակ է համարվում Անպոչ-ճգնավորը[49], ով Սուրբ Կարապետի սիրելի աշուղն էր. նրա երգերը նույնպես երգվում էին մայրավանքերի, Թուխ Մանուկ սրբավայրերի եւ լուսաղբյուրների մոտ:

Մանուկն եւ ջուրն

Այդ վայրի լեռներէն ի վայր
Ջուրն է շինիդ անցանի, ա՜յ.
Թուխ մանուկ մի դուրս էլեր,
Ձեռքն ու զերես է լուացեր.
Դարձեր ի ջուրն՝ հարցունք աներ, ա՜յ,
«Ջուր դու, ի յո՞ր լեռնէն կուգաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ»:
- Ես այն լեռնէ կուգամ,
Որ հին ու նոր ձիւնն ի վերայ ա՜յ:
«Ջուր դու, ի յո՞ր առու կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ»:
- Ես այն առուն կ'երթամ,

[47] Հավանաբար այստեղ Թուխ Մանուկը Քրիստոս է, քանի որ այս երգում կապվում է մկրտության ավազանի հետ եւ կանգնած է սրբի առաջ:
[48] **Ս. Հայկունի**, Ժողովրդական երգ, առած, հանելուկ եւ այլն, ԷԱԺ, թ. Զ., 1906, էջ 17-18:
[49] Անպոչ-ճգնավորը Ս. Կարապետ վանքի առասպելական սպասավորն է, լավ երգիչ եւ աշուղ՝ շնորհը ստացած Ս. Կարապետից:

Ուր փունջրն շատ է մանուշակին ա՛յ։
«Ջուր դու, ի յո՞ր այգի կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՛յ»։
- Ես այն այգի կ'երթամ,
Որ տէրն ի մէջն է այգեպան ա՛յ։
«Ջուր դու, ի ու՞ր տունկ կը ջրես,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՛յ»։
- Ես այն տունկըն ջրեմ,
Որ տակըն խոտ բերէ գառին,
Ծառըն խնծորի, հազա-վարդին ա՛յ։
«Ջուր դու, ի յո՞ր պաղչա կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՛յ»։
- Ես այն պաղչա կ'երթամ,
Ուր պուլպուլին քաղցր եղանակ ա՛յ։
«Ջուր դու, ի յո՞ր աղբիւր կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՛յ»։
- Ես այն աղբիւր կ'երթամ,
Որ գայ քո եարն ու ջուր խմէ.
Դեմ գամ, ըզդունչրն պագնեմ,
Ապա սիրովն յագենամ[50]։

Հետեւյալ երգը նույնպես երգել են Թուխ Մանուկ սրբավայրերի, Լուսաղբյուրների եւ Խաչաղբյուրների ուխտին՝ հատկապես Խաչվերացի ժամանակ.

Խաչ աղբըրիկ, Խաչ աղբըրիկ,
Ի՞նչ անուշ է քե պաղ ջրիկ.
Աջ կողմիդ է ջրջրիկ[51],
Ձախ կողմիդ է ջլվըլիկ։

Խաչ աղբըրիկ կիգայ կաթ կաթ,
Հոն լոգնողը կ'եղնայ երկաթ։

Խաչ աղբըրկայ ջուրն անուշ է,
Հատ մի արախ սիրտէս կուզէ։
Ուխտաւորներ, ուխտաւորներ,
Եկէ՛ք տեսէք սուրբ խաչքարեր.
Թուխ մանուկ խաչ հոն է կայներ,
Սուրբ ծառին տակ լուսն է ցեթեր։

[50] **Ռ. Պատկանեան**, Ազգային երգարան հայոց, Ս. Պետերբուրգ, 1856, էջ 15-16։ **Վ. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 42-43։

[51] Ջրի ակներ, որոնք ձախից եւ աջից հոսելով, յուրօրինակ խաչեր կազմելով՝ միանում են Խաչաղբյուրի կամ Լուսաղբյուրի գոին։

Սուրբ Թուխ մանուկ խաչն է օրհներ.
Խաչ աղբըրկայ ջուրն ու քարեր,
Լոյսն է ցեթեր մէջ աղբըրին
Կամար կեապեր վերեւ գլխին:

Մեռնիմ քըզի Թուխ մանուկ Խաչ,
Ղուրպան եղնիմ դրանդ առաջ:

Քրիստոս Աստուած, դու ողորմէ,
Իմ ցաւերը դու բժշկէ.
Սուրբ Թադէոս[52], դու հիմ դիր,
Թուխ մանուկ ժամ դու եիս շիներ[53]:

Որոշ դեպքերում Թուխ Մանուկը կարող է լինել սիրահարի հովանավոր-օգնականը.

...Արի էրթանք դըխ կանանչ արտ,
Քըզի նաղլ էնիմ սրտիս դարտ.
Ջիս մի թորկի ժամու դոներ,
Մի կապի իմ ոտ ու ձեռներ:

Կանչիմ Թուխմանուկ Սուրբ Նշան,
Էդ քու աչքերն է փերուշան.
Ջառ ու զարբաբ շորեր քե տամ,
Խաքի-կապե, գնա դըխ ժամ:

Կարուկ է քու շապկի յախեն,
Աստված թըխ իգա ձըր հախեն.
Չըք թորկի օր մարդ մի ընցնի,
Ձըր չօլվերան տան սոխըխեն[54]:

Թուխ Մանուկ սրբավայրերն ունեն նաեւ զանազան փորձանքներից պահպանիչ գործառույթներ եւ որոշ երգերում հիշատակվում են որպես հմայական պաշտպաններ: Կիտուռի (մորեխ) դեմ երգերում նույնպես հիշատակվում է Թուխ Մանուկ սրբավայրը: Կիտուռը հարձակվել է կո-

[52] Հիշվում է այն սուրբը, ում անունով մոտակա մայրավանքն է: Քանի որ սրբավայրի կառուցողը համարվում է Ս. Թադեոսը, հնարավոր է, որ այս սրբավայրը գտնվում էր Մակուի հանրահայտ Ս. Թադեոս վանքի շրջանում:

[53] **Վ. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 160-161:

[54] Ա. Մխիթարյանցի ֆոնդ, Տաղեր եւ խաղեր, մաս Բ., ժողովրդական եւ աշուղական երգեր, «Լե, լե, յաման», ՀԱԻ արխիվ, էջ 596-597: Տղան սիրեցյալի՝ Գուլեի գովքն է անում եւ կանչում նրան իրար հետ ապրելու՝ Սիփան սարեր ու Կոնկու սար: Բավականին մեծ սիրային երգ է, մեջբերվում է վերջին երեք քառյակը:

բեկի դաշտերին, եւ գյուղացիները երգով կանչում են սրբերին ու Աստծուն, որ իրենց ազատի այդ արհավիրքից:

Կիտուռի երգեր

... Կիտուռ գնաց Ումրօ աղբին[55],
Կտրեց զկորեկ թօրկեց զուր պին[56],
Կօտ մի չեղաւ, տէնք սոխի գին:
Մէռիմ քըզի սըբ Հընգրաան
Մատաղ կտրեմ վըր քո շէման,
Արի զկիտուռ մեր հողէն հան,
Հաց մի չէղաւ, բրդենք ի թան,
Ճժեր ուտեն, էրթին գութան:
Մեռնեմ քըզի սըբ Թուխ-Մանուկ,
Ճուղ-ճուղ կորեկ թօրկես կայնուկ.
Մեռնիմ քըզի սըբ-Կարապետ,
Երկու տէր-տէր, մէկ վարդապետ,
Մատաղ կտրեմ Մարկոսի ճետ,
Ժողվա զկիտուռ, լից Մուրատ գետ...[57]

... Անտէր թրթուր անաչք ու լուս,
Կորիկ նոր զականջ թալէ դուս,
Խըպտի[58] կտրէ զկորիկի բուս:
Տո՛ տղայ Նորսո, զիօրիկ քշէ,
Աչքերդ բա՛ց թրթուրն իշէ,
Սեւ եզ յիլ տո՛ւր[59], զկարմիր քշէ,
Մեռնիմ քըզի Թուխ-մանուկ,
Մատաղ էնունք, զքու հող տանունք[60],
Ճուղ ճուղ կորիկ թորկես կանուկ[61]:

Օրուի կիտուր

Հա նայ, նար նայ, նիննայ նար նայ,
Հա նայ, նար նայ, նիննայ նար նայ,
Օրուի կիտուր, օրուի կիտուր,
Ալրի քու տուն, դրուի քու դուռ:
Ալրի քու տուն, դրուի քու դուռ,
զԱբրեն չենէր սէվտայիծուռ:
Կիտուր գնաց ուր հետ թրթուռ

---

[55] Արտերի անուն է:

[56] Իմա՛ թեփ:

[57] Երգի շարունակության մեջ սրբերին կանչելն ու մատաղները չեն օգնում, դիմում են Աստծուն, ով ուղարկում է կարմրալանջ սարյակներին (զըռ զուռ), որոնք ուտում-վերացնում են կիտուռին: **Գ. ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն, ԱՀ, հ. Ե., Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 197-198: Սա բավականին մեծ երգ է, ուստի բերվում է միայն այն հատվածը, ուր հիշատակվում է Թուխ Մանուկը: Դատելով երգի բովանդակությունից՝ այն պետք է ծիսական լինի, թեեւ հեղինակն այն զետեղել է երգիծական երգերի շարքում:

[58] Իմա՛ աշխատել:

[59] Իմա՛ ետ քշել:

[60] Այս դեպքում, փաստորեն, կիտուռի դեմ պայքարում օգնում է Թուխ Մանուկ սրբավայրի հողը, ինչն էլ տվյալ դեպքում փոխարինում է այլ վայրերից հայտնի Ս. Հակոբի աղբյուրի ջրին:

[61] **Տ. Նավասարդեանց**, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 6, Թիֆլիս, 1890, էջ 69-70: Երգի ընդարձակ ծավալի պատճառով մեջբերվում է միայն վերջին մասը:

Հանչի դոներ վորցին զկիտուռ՝
Կիտուր գնաց թրթռան հետ,
Անտրէ Մխոն մատղեց զուր ճետ։

Եա մեռնիմ քե, Սուրբ Թուխ-Մանուկ,
Իրեք արտուց քիլա մա տուր։

Եա մեռնիմ քե Սուրբ Էջմիածին,
Կիտուր իջաւ աւրեց զխաժին[62]։

Առանձին տեղ է գրավում հետեւյալ երգը, որի կատարման մանրամասների վերաբերյալ տվյալներ ինձ հայտնի չեն.

Էլ են խոքին չկա մըչ ձեր,
Թուխ մանուկներ հայոց էրգրի,
Թուր ու կալխան[63] չկա մըչ ձեր,
Էլ դո՞ր ճժեր էրթան զելվին[64]։

Մըչ ձէ դրին մեգ-մեգ խաչքար,
Ռանգ-ռանգ շուշպա, մոմ ու մոմկալ,
Տիրոջ մեղա խոսքիս խամար,
Իմա՞լ սովրին մեր ասք պախեն։

Հայրիգ[65] էգավ ուր աչք-հունք թաց,
Երես դառուց ասուց չեղաձ,
Ըսեց. «Հուր էր խայուն աստված,
Աստված անգութ ուժեղին էր»։

Ըսեց. «Ի՞նչ ա աստված ու խաչ,
Մանկանց կոչեք ի զեն, հառաչ,
Աշխար գլխուն կառի մեր աչ,
Խոսք ամեն տեղ ուժեղին ա»։

Թուխ մանուկներ խոքի առին,
Ժողվին ճիժ-պիժ, նման խնին,
Թրի լեզուն թըխ լավ սերդին,
Մեր փրգութեն մըչ ըզրան ա[66]։

---

[62] Տարօն, հավաքածոյ ժաղովրդական երգերու, հ. Ա., հավաքեց եւ կազմեց՝ Ա. Տէր-Խաչատուրեանը, Պէյրութ, 1950, էջ 65-66։
[63] Իմա՛ վահան։
[64] Իմա՛ կուիվել, թրծվել։
[65] Խրիմյան Հայրիկ (Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցի)։
[66] Ալաշկերտ, Կազի գյուղ, ասացող՝ Կաքավ մայրիկ (106 տ.), ՀԱԻ արխիվ, «Պիոներ կանչ»-ի արխիվ, թղթ. 2, էջ 9։

Բանահյուսական փոքր ժանրի ստեղծագործություններ

Ըստ Վ. Տեր-Մինասյանի՝ Խաղողօրհնեքին ու Ճրագաքաղին անդաստան են կատարում: Շողակաթի ցերեկը հավաքվում են, գալիս է շուռ-ջառազգեստ քահանան՝ աջ ձեռքում մկրատ, իսկ ձախում՝ խաչ: Տիրա-ցուները վառած մոմերով ու կանթեղներով երգում են. «Արեւելք գե-ղարփին եւ օթարան լուսածին» շարականը եւ գնում են դրախտը[67], եթե վանք ունեն, իսկ եթե չունեն, գյուղի կամ քաղաքի երեցփոխանի այգին են գնում, ուր ճշտորեն կատարում են անդաստանի արարողությունը: Ապա դպրապետն ուժեղ ձայնում է. «Օրհնեա, Տէ՛ր»: Ժամարարը ձայ-նում է. «Օրհնեսցի ողկուզ... Այգւոյս այս նշանաւ սուրբ Խաչւոյս եւ սուրբ Աւետարանաւս եւ աւուրս շնորհիւ», հետո ժամարարը վերցնում է մկրատ կամ դանակ եւ կտրելով մի ողկուզ ու ցույց տալով ժողովրդին՝ բարեմաղթում է. «Երկնքի լոյս Թուխ մանուկներէն ցօղուած են այս մեր այգիներու ողկոյզները. Աստուած օրհնեց մեր այգիները Նոյի տապա-նով, Քրիստոսի սուրբ խաչով, Աստուածածնի արցունքով, Լուսավորչի լոյս հաւատքով.

Հաց ու գինի
Տէր կենդանի
Թէ մեր այգիներն ալ պիտի ըլլան միշտ դալար
եւ ողկոյզներն ըլլան միշտ անսպառ»[68]:

Վանի Այգեստան թաղամասի Թուխ Մանուկին վանեցի կանայք կիրակնամուտին միշտ ուխտ էին գնում, մոմ վառում, խունկ ծխում, նրա կանթեղի մեջ ձեթ լցնում: Եթե կանթեղի ձեթը պակասեր, մատու-ռի շուրջ լույս էր փայլում, եւ դա տեսնելով՝ վանեցիներն շտապում էին ձեթ տանել սրբավայր: Թուխ Մանուկից երեխաների, հատկապես տղաների համար պաշտպանություն էին հայցում՝ աղոթելով. «Ով Թուխ մօրուս Թուխ մանուկ, դու իմ մանուկը սիվտակ մօրուս անես, արեւ շա-տութիւն տուր իմ կտրիճին՝ իր խօր տան ճրագ էլնի, գայ քեզ հա ճրագ-լոյս պիրի, քո կիւրակնամուտ վառ պահի»[69]:

Թուխ Մանուկը հզոր մուրազատուր սուրբ է: Նրան դիմում են շատ դեպքերում եւ նա միշտ օգնում է: Հաճախ նա հայտնվում է երազների եւ տեսիլքների միջոցով: Հեքիաթներից մեկում պատմվում է, որ թագա-

---

[67] Վանքերի պարտեզները կոչվում են դրախտ:
[68] **Վ. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 156-157:
[69] **Ե. Լալայեան**, Վասպուրական. Հաւատք, ԱՀ, հ. XXV, Թիֆլիս, էջ 54-55:

վորն ու թագուհին երեխա չունեին, օր ու գիշեր դրա մասին էին մտածում: Գիշերը թագուհին երազ է տեսնում.

«Գիշեր հալվոր մարդմե էրազ կիգա, ընտրա մորուք ճնից լե սպիտակ կեղնի, էրկեն[70], չոքեր կհասնի ու կընկան կըսե.

- Հողածին, հորի՞ հմալ էրկեն-բարակ կմտածիս, կյանք տի սուդ ու լացով կընցուս, ես սուրբ Թուխ Մանուկն իմ, ընճնե մը վախենա, ես մուրազտի կիտամ:

Սաբախտան[71] չուտ թագավորիդ ըսե, թըխ մարդ ճամփե Բինգոլի Սեր ախպրից 7 իշաբեռ ջուր բերեն, կուժ մե դու ու մարդտի 7 օրվա մեջ կխմիք, օրեկան իրեք հեղ, մանցած ջրով դու ու մարդտի կլողկնաք ու ասու հրամանքով դու կերկուհոգովնաս, կընցնա 9 ամիս, 9 օր, 9 սհաթ, դու խորոտիկ տղեմե կբերիս»[72]:

Այդպես էլ անում են, եւ նշված ժամանակին թագուհին մի տղա երեխա է ունենում:

Թուխ Մանուկ սրբավայրերում «Հայր մեր»-ից, այլ աղոթքներից, սրտի փափագից բացի, դիմում են հենց սրբին ուղղված փոքրիկ աղոթքներով, ուր շեշտվում է նրա՝ մուրազ կատարողի ուժը:

Թուխ Մանուկ ուխտ եմ գացեր,
Սրտիս դոներն եմ բացեր,
Մուրազ կուզեմ, մուրազ տուր,
Թուխ Մանուկ մուրազատուր[73]:

Ահա մեկ այլ փոքրիկ աղոթք՝ ուղղված Թուխ Մանուկին.

Թուխ մանուկ, քո անուշ անվան մեռնեմ,
Իմ նպատակը կատարես, ես մատղով-շուշպով կգամ քո դուռ[74]:

Որոշ Թուխ Մանուկ սրբավայրեր ունենում են իրենց հատուկ խնամողները, որոնք այդ գործառույթը ստանում են տեսիլքի կամ երազի

[70] Իմա՛ երկար:

[71] Իմա՛ առավոտ:

[72] **Ս. Սողոմոնյան**, Խելացի թագավորի մե պատմուտեսի հեքաթը, թղթ. 4, Կարսո նահանգ, Խնուս, էջ 234-244, ՀԱԻ արխիվ, Ե. Խաչատրյանի եւ Ս. Սողոմոնյանի ֆոնդ: Գրեթե բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերի մասին պատմվում են երազներ եւ տեսիլքներ, որոնց միջոցով էլ մարդիկ հաղորդակցվում են սրբի հետ: Թուխ Մանուկների կերպարը բացահայտելու համար երազներն ու տեսիլքներն ունեն գերակա նշանակություն: Սույն աշխատանքում երազներ ու տեսիլքներ չեն ընդգրկվել, քանի որ դրանք այլ աշխատանքի նյութ են, այս մեկը զետեղվել է, քանի որ այն հեքիաթից է:

[73] **Ե. Մելիքեան**, Հարք-Խնուս, Անթիլիաս, 1956, էջ 369:

[74] **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Գեղհովիտ, ասացող՝ Կիրով Մովսիսյան, 1939 թ. ծնվ.:

միջոցով: Ժողովուրդը այդ խնամողներին հիմնականում անվանում է «Թուխ Մանուկի տեր»: Այդպիսի խնամողներից մեկի աղոթքը հետեւյալն է.

Թուխ Մանուկ ջան, քո շունն իմ, քո ծառան իմ, քո դեմ կհաչամ:
Դու պահապան բոլորին:
Դու պաշտպան պանդուխտներին:
Դու պաշտպան օտարականներին:
Դու պահապան զինվորներին[75]:

Հաջորդը նույնպես Թուխ Մանուկի խնամողի աղոթքն է՝ ուղղված Զամբլու-Քուչակի Թուխ Մանուկ-Ս. Կարապետին.

Զորավոր զորքիդ մեռնիմ,
Քո մարմար քարերիդ մեռնիմ,
Թուխ Մանուկ ջան:
Հեռու տեղից էլ կգամ՝
Մարմար քարերիդ մեռնիմ:
[Հայր մեր ...]
Խաչ հայրական, Խաչ,
Տասերկու շարք շարական,
Չարոցի մաշ, չարխափան՝
Քրիստոս կայնեց պահապան:
Ողջույն քեզ Մայրամ,
Օրշնյալ ես ի Քրիստոսին,
Ամենազորավորին,
Հանուն Հոր, եւ Որդու,
Եւ Հոգուն Սրբո, Ամեն:
Փառքդ շատ ըլլի, Աստված իմ,
Փառք քո զորության:
Դու պաշտպան կայնիս ախշարին,
Հայ քրիստոնյային՝
Զորություն թափիս վրրներ[76]:

Բացի Թուխ Մանուկ սրբավայրերից, գոյություն ունեն նաեւ Թուխ Մանուկ կոչված Ավետարաններ: Դրանցից մեկի հիշատակարանում, որ գրված է հետագայում, կան երեք ձոն-աղոթքներ՝ նվիրված այդ Թուխ Մանուկ Ավետարանին[77]:

---

[75] ԴԱՄ, Մաստարա, ասացող՝ Հրանուշ Թադեւոսյան, 1930 թ. ծնվ.:
[76] Ռեժիսոր Խանե Պողոսյանի ձայնագրություններից, Արագածոտն, Քուչակ, 2015:
[77] Այդ Ավետարանը, որ կոչվում է Թուխ Մանուկի, ըստ գրչության արվեստի եւ ոճի՝ թվագրվում է ԺԵ.-ԺԶ. դարերով, տես Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված

1. Սուրբ Թուխ Մանուկ
(Յ)ուսացելոց Աւետարան
Ուխտաւորաց բըժըշկարան
Ամեն կողմից դէպ քեզ կուգան
Մուրադ առաց յետ կը դառնան:
Ուխտաւորաց բժիշկ ես դու
Դիւահարաց սրփիչ ես դու
Անգեալներոց կանքնիչ ես դու
Քեզ եմ դիմում Սուրբ Թուխ Մանուկ
Ուխտաւորաց ես դու նեցուկ:
Շատ փափակով քեզ դիմում եմ
Սո(ւ)րբ անո(ւ)նդ միշտ յիշում եմ
Ես Սարգիսս մեղաւոր եմ
Բայց փափակով քեզ յիշում եմ
Աւետարան Սուրբ Թո(ւ)խ Մանուկ[78]:

2. Ով Սուրբ Աւետարան Թուխ Մանուկ,
Ծառայ եմ քեզ եւ ստրուկ,
Ունիմ կարիք, ցաւեր յատուկ,
Հրաման փրկելու շնորհէ կտրուկ:
Եկել եմ մօտդ ուխտելու,
Խորունկ ցաւերս լալու
Ձիրք շնորհէ զիս փրկելու,
Մեղաց ախտէս ազատելու:
Թուխ Մանուկ Սուրբ Աւետարան,
Քրիստոնէից յոյս փրկական.
Մօտդ կուգան շարան շարան,
Փապակ առած ուրախ կերթան:
Մանաւանդ եւ ես նկուն էակ,
Սրտումս կվառէ հուր կրակ.
Լալով խնդրեմ փրկիլու ճարակ,
Լեցուր վառ յոյս ու փապակ:
Սուրբ Աւետարան զօրաւոր
Ունիս հոչակ անուն ահաւոր,
Տոչորիմ հեծծեմ արտասուաթոր
Փրկութեանդ կարօտ ինքս անզոր:
Հէգ Միքայէլ Տէր Գրիգորեան,

ձեռագրերի, Էջմիածին, 1980, ԺԲ., էջ 54. **Մ. արք. Աշճյան**, Թուխ Մանուկ, «Թուխ Մանուկ» (նստաշրջանի նյութեր), էջ 11:

[78] Հեղինակն է Միքայել Տեր-Գրիգորյան, գրված է 1927 թ.: Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, էջ 55. **Մ. արք. Աշճյան**, նշվ. աշխ., էջ 12: Նա մեջբերում է՝ առանց վերջին երկու քառյակի:

Յաշխարհ եկի անցայ ունայն,
Մահկանացու վարքն է համայն
Դու կարդացող յիշէք մի անգամ[79]:

3. Ուխտաւորաց Աւետարան,
Յուսացելոց բժշկարան.
Ամեն կողմից դէպ քեզ կուգան,
Մուրազ առած ետ կու դառնան:
Քեզ կը դիմեն ամեն անհատ,
Թէ հարուստներ եւ թէ աղքատ,
Աղօթք արցունք կանեն առատ,
Բուժակ դեղդ կուտաս առատ:
Ախտաւորաց բժիշկ ես դու,
Դիւահարաց սրբիչ ես դու,
Անկեալներու կանգնիչ ես դու,
Դիմողներուդ անդորրն ես դու:
Քեզ եմ դիմում Ս. Թուխ Մանուկ,
Ուխտաւորաց ես դու նեցուկ,
Որք հաւատով քեզ կուպագեն՝
Յոյս եւ մուրազ դերեւ չառնես:
Երկտողս կերտողս մեղաւոր եմ,
Բայց փափակով քեզ դիմում եմ,
Թող նկունիս որ գծում եմ,
Սուրբ թերթերդ շոշափում եմ[80]:

Հաջորդ աղոթքը յուրահատուկ կառուցվածք ունի՝ մեկտեղված են աղոթքն, ավանդույթն ու տեսիլքը:

Էս մեր վանկը կառուցեր են այլ ազկ մառտիկ[81],
Հայ ժողովուռտին են նվիրել...
Անունը դրել են Թուխ Մանուգ,
Սիրելի սուռպ Թուխ Մանուգ ջան,
Քանի որ մենկ հայ ենկ, կանկ,
Քօ սուռպ մադաղները ու քօ սուռպ մօմերը պըղդի տանկ,
Սիրելի սուռպ Թուխ Մանուգ վանկ:
Ազիզ օրերին, ուխտ օրերին ջահել աղջիկ — տղա,

[79] Հեղինակն է ոմն Սարգիս, ով հավելում է. «Գրրեցի 1935 թ.ին Զատիկ անցեալ յինգշաբտէ օր, օվ կարդա եւ յիշի ինքն էլ յիշեալ լինի Աւետարանի մոտ»: Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, էջ 54:

[80] Հեղինակ՝ Ամիր Շահբազյան, գրված է 1932 թ.: Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, էջ 55. **Մ. արք. Աշճյան**, նշվ. աշխ., էջ 12-13:

[81] Տես հղում 27:

Ձեռք ձեռքի տված՝ դուռդ են գալիս,
Սիրելի սուռպ Թուխ Մանուգ ջան:
Դու նրանց մուրազն ես տալիս,
Հիվանդ մառտը ձեռկը կըռծկին դուռդ է գալիս,
Նեռսիծ մի ըսպիդագ մազերով ծերունի դուռս է գալիս:
Հույս է տալիս. «Մի՛ վախենա, դառծի գընա,
Ամեն ինճը լավ կլինի, դառծի գընա»:
Սիրելի սուռպ Թուխ Մանուգ վանկ,
Դու նըրանը հույս ես տալիս,
Դու նըրանը կյանկ ես տալիս,
Ցավիծ, չոռիծ ազադըմ ես, փըրգըմ...[82]

Երբեմն Թուխ Մանուկի անունը կարող է հնչել նաեւ մանկական խաղերում: Տվյալ դեպքում, կարծում ենք, խոսքը սրբավայրի մասին չէ, այլ պարզապես «երեխա» նշանակությամբ է ի հայտ գալիս մանկական խաղում:

Մանկական խաղի երգերի տարբերակներ

Տիտեխիկ-տիտմարուխիկ,
Ջուռնափչիկ, թուխ մանուկիկ,
Էփե գաթայ կուկուռուճայ,
Եղն ի վրէն ու պճպճայ,
Հագնի իտայ, կապէ իտայ,
Ելնայ իտայ,
- Վիր տուն իջնայ,
- Գուզալի տուն,
- Էս Գուզալ,
- Էն Մուրասդ,
- Էն Դիլպար,

Տիտեխիկ-տիտմարուխիկ,
Ջուռնափչիկ,
Թուխ Մանուկիկ,
Էփե գաթայ,
Կուլուճայ,
Եղն ի վրէն ու պճպճայ:
Ուտէ
Խմէ
Հագնի
Կապէ,
Ելնա[83]:

[82] Գրի առավ Գ. Հակոբյանը, ասացող՝ Ա. Եփրեմյան, նշվ աշխ.:

[83] **Ե. Մելիքեան**, նշվ. աշխ., էջ 380-381: Քանի որ Մելիքյանն իր գրքում այս երկու երգերը գրանցել է որպես մանկական երգեր, խաղը վերականգնում ենք՝ ըստ **Գ. ք. Նժդեհեանցի**, նշվ. աշխ., ԱՀ, հ. Ե., էջ 187-188: Այստեղ կան մի քանի մանրամասներ եւ երգի այլ տարբերակ, ուր բացակայում է «Թուխ Մանուկիկ» տողը: 6-15 տարեկան երեխաներն իրենց ձեռքերը շրջանաձեւ բռնում են մեկի ծնկի վրա՝ ձեռքի ափը ներքեւ: Նրանցից մեծը, մատով համրելով մյուսների ձերքերը, երգում է.
Տիրօխիկ (խուրի դեզեր) // Տիրմալօխիկ (մի շարքի վրա) // Ջուռնաթողիկ, // Էփայ գաթա // Ու կուլիչայ (բեր այս կողմ) // Եղն ի վէրէն // Կը պճպճայ. // Ուրայ Էնայ, // Խմայ Էնայ, // Քաշայ Էնայ...

- Էն Բաղդասար,
- Էս Անոն,
- Էն Շանոն,
- Էս կատուն,
- Էն սլուկ մուկ
- Փախնի էրթայ:

Տստոխին, տիտմօրօխին,
Զուռնա թխին, թուխ մանուկին.
Եվի քաղա, կուպուլուճան,
Իղն ի վրէն կու պճպճայ.
Ուտէին, խմէին,
Մաշէին, ելնէին[84]:

Տուտուխիկ,
Տուտ մարուխիկ,
Տամբլաբազիկ,
Զուռնափչիկ,
Թուխ մանուկիկ.
Էճընա էճըմ վերեն,
Մեղրը գիոզ՝ ըռուբ վերեն,
Էնա կերավ,
Էնա խմավ,
Էնա թռավ[85]:

Նախնական ընդհանրացումներ. Թուխ Մանուկները, որպես կարեւոր սրբավայրեր, մյուսների նման կարող են վկայակոչվել. ժողովուրդը կարող է երդվել նրանց անունով: Օրինակ՝ Տարոնի ժողովրդին բնորոշ էր երդվել կամ վկայակոչել ոչ միայն ծնողներին, մերձակա վանքերին, տարբեր սրբերին, այլեւ հատկապես Թուխ Մանուկներին եւ իրենց գյուղերի ավետարաններին, բայց ամենազորեղը Ս. Կարապետն[86] էր: Ահա Թուխ Մանուկի անունով մի քանի երդում.

Յուրաքանչյուր «իտայ» ասելով, որ ձեռքին դիպավ, դուրս է գալիս խաղից: Այսպես շարունակ, մինչեւ մի ձեռք մնա: Հետո երգողը, վերցնելով այդ ձեռքը, ցուցամատն ու ճկույթը ետ դարձնելով, բռնում է, ափը վեր անում ու հարցնում՝ տրորելով ափի մեջ, իբրեւ թե ձվածեղ է պատրաստում եւ ավելացնում է.

Զու-ձու, ձրվածեղ // Սրբ-Կարապետ մաղթա զեղ: // - Վիր տուն էս քնէ: Զեռքի տերը պապտասխանում է, // - (օր.) Կարապետին. // - Էսայ՝ Կարապետ, // - Էսայ՝ ուր կնիկ, // - Էսայ՝ ուր տղէն, // - Էսայ՝ ուրջիկ, // - Էսայ՝ կով, // - Էսայ՝ կթոց // - Էսայ՝ շուռ դուր փողոց:

Երգողը, միջնամատով խփելով նրա ճակատին, երգելով հերթով տալիս է Կարապետի տան անդամների, կենդանիների, առարկաների անունները: Վերջում բռնած ձեռքի երեւակայական ձվածեղը թափում է երեսին եւ գլուխը ետ հրում:

Հեղինակը վերջում նշում է, որ վա՜յ այն երեխային, որ «վիր տուն ես քնե» հարցին սխալմամբ բազմանդամ ընտանիքի անուն է տալիս:

[84] **Գ. Տէր-Աղեքսանդրեան**, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մասն Ա., Թիֆլիս, 1886, էջ 22: Հեղինակը կարծում է, որ այս խաղը երեւանցիներն են տարել Թիֆլիս:

[85] **Ռ. Գրիգորյան**, Հայ ժողովրդական օրորոցային եւ մանկական երգեր, Երեւան, 1976, էջ 192:

[86] **[Գ. Սրվանձտյանց],** Մշոյ աշխարհ, Լումայ, գ. Ա., 1899, էջ 108:

Մեռնեմ Թուխ-մանուկի զորությանը, որ թեղի է դարձել[87]:
Ձանգոկը Թուխ Մանուկ վկա[88]:
Սուրբ Թուխ Մանուկ, դու գիտես[89]:

Թուխ Մանուկը կարող է հալածել չարքերին, նույնիսկ սատանային. նրա անվան զորությունը բավական է, որ չարքը փախչի: «Թանթռռո» հեքիաթում հերոսը թաքնվում է գոմում, իսկ մարդիկ կարծում են, թե սատանա է մտել: Նրանք փայտերով, դանակներով, խաչերկաթներով, գոռգոռալով մտնում են գոմը, որ վռնդեն սատանային եւ գոչում են.

«Յա՛ Մշու սուլթան սըբ Կարապի, դու խափանիս զչարք:
Յա՛ Առաքելոց վանք:
Յա՛ Թուխ Մանուկ»[90]:

Եթե երդումը խախտվում էր, երդմնազանցներին փորձանքներ էին սպասվում, նրանց նաեւ անիծում էին, եւ պատժողը պետք է լիներ հենց այն սուրբը, ում անունով երդումը դրժվել էր:

«Թուխ Մանուկն աչքերդ բռնի»[91] անեծքը հայտնի է նաեւ Արգավանդում[92]:

Մ. Գալշոյանի «Թուխ Մանուկ» պատմվածքի Թուխ Մանուկը թեեւ հավաքական է, իրական վայրի սրբավայր չէ, սակայն պաշտամունքն ու ընկալումները տրված են ճշգրտորեն: Պատմվածքի առանցքը Թուխ Մանուկ մատուռի կառուցումն է Վարդո մարեի կողմից, պատերազմի ժամանակ դեպի սրբավայր կատարած ուխտագնացությունների հաճախացումը եւ երդումը Թուխ Մանուկի անունով: Երբ Վարդո մարեն կառուցում է սրբավայրը, Գեւոն, որ կոլխոզի նախագահն էր, ծաղրում ու խոչընդոտում է նրան: Վարդոն ուխտ է անում՝ երբեք չխոսել նրա հետ: Ժամանակի ընթացքում Գեւոն զրկվում է իր բարձր դիրքից ու դառնում կոլխոզի պահակ: Մի օր նրան մեղադրում են գողության մեջ, սակայն

---

87 **Պ. Պողոյան**, նշվ. աշխ., էջ 414: Ավանդությունը տես 1 էջում:

88 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ն. Շամամյան**, ԴԱՆ, Արագածոտն, Թալին-Վերին Սասնաշեն, 2015, ասացող՝ Ամալյա Հակոբյան, 1954 թ. ծնվ.: Այսպես է երդվել իր հայրը: Սասունում Ձանգոկ գյուղ մեզ հայտնի չէ, գուցե Ձալդակա գյուղը լինի: Կարող է նաեւ ոչ թե բնակավայրի, այլ տեղանքի անունով է կոչվել Ձանգոկա:

89 ԴԱՆ, Վարդենիկ, ասացող՝ Սիրուն Սահակյան, 1923 թ. ծնվ.:

90 Թանթռռոռ, Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան, հ. 10, 1967, բանահավաք՝ Բենսե, Բուլանըխ:

91 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Կոտայք, Արզել (Լուսակերտ), 2013, ասացող՝ Լյուբա Կարապետյան, 1941 թ. ծնվ.:

92 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արմավիր, Արգավանդ, 2012, ասացող՝ Ջորիկ Օրդուխանյան, 1947 թ. ծնվ.:

նա նախագահի հետ գնում եւ երդվում է Թուխ Մանուկում, որ ինքը մեղավոր չէ: Այդ իմանալով՝ Վարդո մարեն ներում է նրան. - «Ուրեմն Գեւոն Թուխ Մանուկ էրթալու, նրան երդվելու ա՞հ է ունեցել: Գեւո, Աստծո օրհնանք թափվի քու գլխին, լաո՛, օղորմի քու անուշ հոր... Վարդո մարեն գնում եւ մեղա է գալիս Գեւոյի առաջ. - Եկա հետդ լեզու թրջիմ, խռով-խռով չմեռնիմ: Մեղք է: Թուխ Մանուկ վկա, Գեւո...»[93]: Վերջում խնդրում է Գեւոյին իր հետ գնալ Թուխ Մանուկ՝մեղքերին թողություն խնդրելու:

Այսպիսով, հիմնվելով բանահյուսական նյութի վրա՝ կարելի է փաստել, որ ժողովրդի մեջ առկա են պատկերացումներ Թուխ Մանուկի, նաեւ՝ սրբավայրի առաջացման եւ զորության մասին: Նրան հղվում են աղոթքներ, ձոնվում են երգեր, վերջապես նրա անունով երդվում եւ անիծում են:

Ավանդույթների մեծ մասում Թուխ Մանուկն այլազգի կամ այլադավան մի երեխա է, որին սպանել են քրիստոնեություն ընդունելու համար: Այլ ավանդույթներում Թուխ Մանուկը Քրիստոս է:

Երգերում արտահայտվում է Թուխ Մանուկների երկնային զորք լինելը: Դրանցում Թուխ Մանուկին, ի թիվս այլ սրբավայրերի, դիմում են արհավիրքներից ազատվելու, սիրո մեջ երջանկություն գտնելու նպատակով:

Թուխ Մանուկին ուղղված են նաեւ ժողովրդական աղոթքներ, որոնցում նրանից բժշկություն, պահպանություն ու պաշտպանություն են խնդրում իրենց եւ աշխարհի համար:

Տեղադրությունը	Սրբավայրի տեսակը	Կերպարը	Գործառույթները
Համզա-Շեյխ, Բուլանըխ	Մատուռ	Քուրդ շեյխի նահատակված որդի	Անհայտ
Աշտարակ, Արագածոտն	Հնձանաբաց եւ թեղի ծառ	Պարսիկ մոլլայի նահատակված որդի	Սիրահարների հովանավոր
Գեղհովիտ, Գեղարքունիք	Մատուռ, այժմ՝ եկեղեցի	Սեւ մաշկով մանուկ	Զավակատու, ճանապարհորդների հովանավոր, զինվորների պահապան, բուժիչ
Ալափարս, Կոտայք	Մատուռ, ջրի ակ	Հիսուս Քրիստոս	Զավակատու, բուժիչ, զինվորի պահապան
Արեւշատ 1, Արարատ	Մատուռ	Հիսուս Քրիստոս	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ

[93] **Մ. Գալշոյան**, Թուխ Մանուկ, Զորի Միրոն, Երեւան, 1983, էջ 159-166:

Մասպարա, Արագածոտն	Մատուռ	Հիսուս Քրիստոս	Զավակատու, զինվորի պահապան, գերմարդկային ուժ տվող, բուժիչ
Հացաշեն, Արագածոտն	Մատուռ	Աստված՝ եկած սեւուկ մանուկի տեսքով	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ
Կապուտան, Կոտայք	Ժայռ, մենհիր	Սեւուկ երեխա	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ
Պտղնի, Կոտայք	Եկեղեցու հիմք	Նահատակված քույր ու եղբայր	Զավակատու, զինվորի պահաապան, բուժիչ
Արեւշատ 2, Արարատ	Գետաքարերի կույտ	Երեք քույրերից մեկն է՝ կուս Վառվառը	Զավակատու, բուժիչ
Վարդենիկ, Գեղարքունիք	Մատուռ	Թուխ տղա	Զավակատու, երեխաների խնամող, զինվորրի պահապան, բուժիչ
Լիճք, Գեղարքունիք	Մատուռ	Տղա երեխա եւ Զորավար Անդրանիկ	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ
Կարմիրգյուղ, Գեղարքունիք	Մատուռ, գերեզմանատուն	Քառասուն մանուկների կրտսերը՝ թուխ տղա	Հանգուցյալի հիշատակի եւ զինվորի պահապան, զավակատու, բուժիչ
Մեղրաձոր, Կոտայք	Թեժառույքի վանք, տանձենի, քարակույտ	Նահատակված ջհուդ եղբայր եւ երկու քույր	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ
Վարդենիս, Գեղարքունիք	Մատուռ	Կախարդական պաշտպան	Զավակատու, զինվորի պահապան, պաշտպան, բուժիչ
Շիրակ	Եկեղեցի	-	Սիրահարների հովանավոր
Ալաշկերտ	-	-	Արհավիրքներից (մասնավորապես կիտուռից) պաշտպան
Ալաշկերտ	-	Նահատակ-զինվորների հոգիներ	Ազգի պաշտպան
Վան	Մատուռ	Հասուն տղամարդ	Զավակատու, տղա երեխաների պաշտպան
Տարոն		Ալեւոր ծերունի	Զավակատու
Քուչակ-Զամիղու, Արագածոտն	Մատուռ	Սուրբ Կարապետ	Զավակատու, զինվորի պահապան, բուժիչ, ճանապարհորդի պահապան

Աղյուսակ 1. Թուխ Մանուկների տեսակային, կերպարային եւ գործառութային տիպաբանությունը

Սրբավայրի տեսակը	Կերպարը	Գործառույթները
Մատուռ - 12	Հիսուս Քրիստոս - 4	Զավակատու - 14
Եկեղեցի - 3	Ս. Կարապետ - 1	Բուժիչ - 13
Վանք, տանձենի - 1	Այլազգի երեխա - 3	Զինվորների պահապան - 13
Հնձան, թեղի - 1	Թուխ երեխա/պատանի - 5	Սիրահարների հովանավոր - 2
Ժայռ, մենհիր - 1	Նահատակ զինվորների հոգիներ - 1	Ազգի պաշտպան - 1
Քարակույտ - 1	Կախարդական պաշտպան - 1	Արհավիրքների պաշտպան - 1
	Հասուն մարդ - 1	Հանգուցյալների հիշատակ պահող - 1
	Ալեւոր ծերունի - 1	Ճանապարհորդների հովանավոր - 2
	Կույս Վառվառա - 1	
	Տղա երեխա եւ Զորավար Անդրանիկ - 1	

Աղյուսակ 2. Թուխ Մանուկների տեսակային, կերպարային եւ գործառութային տիպերի քանակական պատկերը

РЕЗЮМЕ

Святилища Тух Манук широко распостранены в Армении. Эти святилища существенно разнятся как сооружения и объекты культа. Часто ритуалы имеют мифическую основу, но иногда могут быть основаны не на мифе. В культе Тух Мануков доминирует именно последний тип: ритуальные действа в основном остаются вне нарративного дискурса, т. е. мифология Тух Манука имеет самостоятельное, не свазанное с ритуалом значение.

Основываясь на фольклорных материалах, можно сказать, что в народе существуют представления как о том, кто есть Тух Манук, так и о том, как возникло святилище, каким могуществом оно обладает: к нему направлены молитвы, ему посвящаются песни, наконец, его именем клянутся и проклинают. В большинстве легенд Тух Манук является ребенком, представителем другого этноса или веры, которого убили за принятие христианства. В других легендах Тух Манук есть сам Христос. В песнях выражется сила и мощь Тух Мануков, которые представляются как небесное воинство. К Тух Манукам, в ряду других святилищ, обращались так же, чтобы спастись во время катаклизмов, быть счастливыми в любви. Тух Мануку направлены молитвы, в которых у них просят излечения, защиты и сохранности для себя и для всего мира. Наряду со снами и видениями, фольклор связанный с Тух Мануком, является важнейшим источником для понимания этого образа.

SUMMARY

Shrines named Tukh Manuk are widely distributed in Armenia. They differ in construction and in character of worship. Often rituals have mythical reasoning but sometimes they may exist independently. In the cult of Tukh Manuk the last type of interrelation between the myth and the ritual prevails, i. e. the mythology of Tukh Manuk has its own significance that is not connected to the ritual.

Researching folk-lore materials one may outline that there are folk imaginations on who is Tukh Manuk as well as on the origin of the certain shrine and the kind of his power. There are prayers appealling to him, songs dedicated to him, at last, one swears and curses in his name. In most legends Tukh Manuk is a child, a representative of an alien ethnic or religious group, who is killed for adopting Christianity. In other legends Tukh Manuk is the Christ himself. In the songs the might and power of Tukh Manuk is expressed to be represented as the heavenly host. People asked Tukh Manuk shrines, like to other holy places, to save them in disasters, to find happiness in love. There are popular prayers directed to Tukh Manuk, in which one asks healing, protection and safety for the own and for the whole world. Along with dreams and visions, folk-lore connected with Tukh Manuk is a very significant source to reveal the essence of the phenomenon.